

129. **Հայ Գրաշարաց Ինկ** + — Գրաշարական միութին մըն էր ասիկա՝ նախաձեռնութեամբ Ա. ՄԱՎԵՆԱՆ բողոք. նայուն, որ պահ մը վիճագրոյ Մոքոսեան հօր նեա աչ ընկերացած է և որուն փորձիկ տպարանը կը գտնուէր Ֆինճանճըքար, Ամերիկ. խանէն վեր: Այդ տպարանը յետոյ փոխադրուած է Պապը Այի, միշտ Թօզլեանի արտօնագիրով: Այս ընկերութիւնը 1830-90 տպած է. — Մոլորեան մը գոնոր: Գարնոցապետն: Թագուն ոյն մանեակը (բարգմ. Բ. Պօզանեան): Արքայն գրօսնու: Պ. Գալպճեան բառարան են.: — Տպարան և անուն իւրացուցած է յետոյ



Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

130. **Յայուծիւն Ասատուրեան** + — Ծնած է Կեսարիա 185 ին: **Հայ գրագարաց ընկերութիւնի** (Շիրքեթի միւրեքրիպիէ) յաջորդ: Այդ ընկերութեան անուամբ բառական ատեն գործելի վերջ, կը կանչուի կառավարութեան կողմն որ կ'ազդարարէ իրեն. «Պոստան պեօլի Շիրէք նամը գալգաճագ». բան մը որուն կը բաղձար արդէն: Այնու նետե իր անունը պահած է միայն՝ դրոշմած իր գիրքերուն ու բերքերուն վերայ, որոնք են (1894-1912). — Բարոյագիտութիւն: Նիւր: Հանրագիտակ: Տարեցոյց «Լիլա»: Պէշիքբաշլեանի բարտերգութիւնք: Բուրան: Մուրճ (օրաբերք) են. են.: — Սամմանադրութեան նուա- կուսն վերջ՝ այս տպարանին անունը վերածուած է Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՒԲԻ:



131. **Աբրիլիչն (Չօբրեան)**. — Ծնած է Ենի Գարու 186 ին: Նախապէս փորագրիչ էր: Տպարանը բացած է 1880 ին՝ Բախմ Բաշա խան, զոր յաջորդարար տեղափոխած է Ֆնուզեան խան, Խասեթի Համամ փողոց, Սուլթան Համամ, որ ուրեմն Հօճա խան ճառտուսի՝ իր սեպնական շենքին մէջ, վիճագրութեան ճիւղով: Երկար ատեն պարապած է կառավարական և պաշտօնական գործերու բազմալեզուեան տպագրութեամբ: Իր յով պաշտօնավարած է Արամ Կ. Սըլվանեան, որ ծանօթ է իր փորագրիչ ու գրաշարապետ և հուսկ ապա՝ տնօրէն: Ներկայիս մէջ գրաշարապետն է Կարապետ Տեմիրճեան: Հետեւեալը փունջ մըն է նոյն տպարանէն յոյս ընծայուած գիրքերէն. — Բնար Սրբազան (1839): Մայրենի լեզու: Քերականութիւն (1891-3): Իրական կեանքի նուագներ: Քեղեցիկ գրքուածք (1892): Կոնդակ օրնութեան: Մինրան Արիկեան բառարան (1893): Նոր դրութիւն գրավարութեան (1894): Նոր գեղագրութիւն (1909): **Օրացոյց** (1893 են սկսեալ՝ մինչեւ վերջ, պզտիկ ընդմատումներով), նաև պատի օրացոյցներ, իրր մրցակցութիւն Ս. Ղ. Պարտիզպանեանի նոյն հրատարակութեան:



ՍԵՐԱԿԻՉԵՆ

132. **Տիպրան Աիվելեկեան** + — Հայ-Հռոմեական: Ծնած է կեսարացի ծնողքէ 1852 ին Պօլիս: Մեռած 14 Փետրվար 1907 ին Բերա: Աշակերտած է Բերայի Վիեննաց-

